

նուրի. «Տ. Յովհ. Թադէոս պիտի տանի Զուղայի Հայերուն Նորին Սրբութեան պատասխանը. այս մասին խօսք եղաւ 1630 Սեպտեմբերին. այս ինքն.

1. Պապը քրիստոնէութեան (քահանայապետական պետութեան) մէջ պիտի տայ Հայ վաճառականներուն տեղեր, որպէս զի կարենան ապրիլ հոն իրենց ծախքով. եւ նոյնին համար պիտի դիմէ ուրիշ իշխաններու (e lo stesso farebbe ufficio ad altri principi). պայմանաւ որ ապրին Հռոմէական Եկեղեցւոյ հետ հաղորդակցութեան մէջ:

2. Եթէ Դպրանոցի (collegio o seminario) համար չենքը, բնակարանն եւ կարասիները գնուին, պիտի կազմուի իւր ժամանակին 405 աշակերտի համար Դպրանոց մը» եւն (տե՛ս § 38, ծան. 12):

Որովհետեւ յիշեալ Հայրը երկար մնաց Հռոմ, պատասխանը երկարաձգուեցաւ մինչեւ 1633 Յունուար 5: Այս թուականով նամակ մը յանձնուած է Տ. Յովհ. Թադէոսի, որ այժմ օծուած էր Սպահանի եպիսկոպոս, ուղղուած Խոջայ Նազարին, որ հետեւեալն է.

Առ Տիար Խոջայ Նազար հայ կառավարիչ Զուղայի.

(Prop. Lettere volgari, an. 1633, vol. 13, f. 3.)

Հ. Յովհ. Թադէոս Բոկոտն Կարմեղեան տեղեկացուց նորին Սրբութեան եւ այս Տ. Հ. Ս. Ժողովին այն օգնութիւններն եւ շնորհ-